



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲՅՈՒՆՈՐԳՐՈՒԹԻՒՆ (Կանխիկ վճարելի)

Տարեկան բաժնորդագին	30 Ֆրանգ
Վեցամսեայ »	15 Ֆրանգ
Եռամսեայ »	7 1/2 Ֆրանգ

ԼԷ ՏԱՐԻ ԹԻՒ 24

1922 ՅՈՒՆԻՎԱՐ 11 ԴՆ (Հ. Տ. 1921 Դեկտեմբեր 29)

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն զրկուած գրութիւնները: Պարտաւոր չէ վերադարձունել շահատարակուած ձեռագիրները: Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Ծանուցման 1 միջակ գերը 2 սանդղիմ կարծէ. 1 զլխագիրը 4 սանդղիմ: Les annonces en français et en arménien sont reçues au bureau de la Rédaction: Place Alexandre-Labadie, 17

Հիմնադիր

Խմբագիր

ՄԻՐՏԻՉ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ

ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատրաստ գտնուիւնք. — Հայաստանի Ը. Փնքերէն. — Էջմիածնի համար. — Հանրի Գիկիա. — Փառաւոր դաս մը եւս. — Հայաստանի Մուրատեան վարժարանը փերած քննութեամբ. — Գերագոյն խորհուրդը. — Նախագահական Ամերիկայի Միացեալ Նահանգներէն Գոնուալիսի վերջը. — Տեղական. — Նամակ Երևան. — Թիւրքական լուրեր. — Նախագահական լուրեր. — Ծանուցումներ:

ՊԱՏՐՄԱՆ ԳՏՆՈՒՆԻՔ

Համաշխարհային պատմութեան մասին կը գրուի յարատեւ ու անոր մասին թատալու մը և կապառնայ անկողին ընել այն բոլոր ազգերը որոնք իրենց վիճակի գիտակցութեամբ չունին, որոնք տկար են և միայնամիտ, որոնք կապրին՝ բայց չեն քննան յաւելու: Վերջին մէկ քանի կարծ տարինե. ընթացքին բազմիցս ոտնակոխ մէջ ընկանք այդ հակադաս անիւթ թա. րանապատմութեան ներքին, մինչև մեր կողմը փորձը արեան ու մոխիրի մէջ կարտադրուցանք, քաջկռօտեցանք ու ին վերածախ նուազած ինկանք մինչև սահմանը ըլլալու աստիճան: Ոչ ոք չխղճաց մեր վրայ. իսկ թեան թացողներ պատառ մը չոր հոց կուտին ին չարտելիք մեր առջև: Ուրիշ տաղանդ կրնանք պահանջել և ի՞նչ իրա. կին ընք ունինք պահանջելու: Մինչև հիմայ, կը թուի, որ դեռ ան թեանք հասկցած թէ ի՞նչ կուզենք, Գիւրիին է պուտայ թէ մենք ազա. ութեան կը ձգտինք, թէ մենք ազգե. չենք իբր մարդ ապրիլ, մեր լուսնայնութիւն, մեր հողին տէր. թուրակ. ար մը որն ալ գոց սորված յանկերգներ չին որոնք կը կրկնեն անգուլ, ա. Ամառնց սակայն ըմբռնելու թէ ի՞նչ է և կովկասնց արտաբերածը: Արդարև, եթէ մենք խորապէս իրանած ըլլայինք թէ մեր պա. անջամը ինչպիսի՞ գժուար, ինչպի. կնճռոտ իրաւունք մ'է, մինչև ժամ քիչ մ'աւելի տարբեր, քիչ

մ'աւելի չըջանայեաց, աւելի վճռա. կամ ու հաստատամիտ պիտի մօտե. նայինք անոր, խորհելով թէ այս աշխարհի մէջ ոչ մէկ ազատութիւն, ոչ մէկ անկախութիւն տեական չէ եղած երբ զանոնք պաշտպանելու կոչուած ժողովուրդները չեն գիտցած թէ առանց ոյժի՝ ազատութիւն մը միշտ ենթակայ է բռնակալի մը հարուածին և թէ առանց հաւա. քականութեան գաղափարին՝ ժողո. վուրդ իր միշտ տկար պիտի մնայ: Երեքուկէս տարի առաջ ունեցանք ազատութեան կռուան մը որ հազիւ երկու տարի ինքզինք կրցաւ ոտքի պահել. պատճառը՝ արտաքին թըշ. նամիներու հարուածը չէր լուի, այլ մեր ներքին ամբողջականութեան թերութիւնը, մեր հոգեկան, բա. բոյսական անկազմակերպ վիճակը: Այնուհետև ի՞նչ ըրինք մենք մեզ գտնելու համար. հետզհետէ մենք միջ աւելի տկարացնելու, մեր ազգի կենսունակ ու գործօն տարրերը ջլատման ենթարկելու ջանացինք, ուրիշ ոչինչ: Յիմարութիւն է կարծել թէ մեր իրաւունքի անվաւեր պահանջարկը ներքին ձեռքբերելու բռնած՝ դռնէ ի դռն ինչպիսի պիտի կրնանք արժե. ցնել: Քաղաքականութիւնը յարատեւ յե. դաշտման մէջ է. ամէն օր նոր վե. րիվայրումներ կրնան յառաջ գալ ու անոնք որ վաղուան կանխահոգու. թիւնը չունին, ենթակայ են պատա. հարներուն խաղալիք դառնալու: Ծարի մըն է որ Հայաստան խոր. հրդային վարչաձևով կիսանկախ կեանք մը քարշ կուտայ. այս՝ բոլո. բովին ժամանակաւոր դրութիւն մըն է և երբեք չկրնար տեական հիմ մը ունենալ որովհետև բնականոն չէ. այդ դրութիւնը կախուած է Ռուսիոյ վիճակէն. իսկ Ռուսիա հետզհետէ կը մտնէ նոր շաղի մը մէջ, հետզհե. տէ կը մօտենայ եւրոպական պետու. թիւններուն, կընթանայ դէպի բնա. կանոն գոյովիճակ. ի՞նչ պիտի ըլ. լայ այն ատեն արդի Հայաստանը:

ահա հարց մը որ պէտք է զբաղեցնէ մեզ, որ պէտք է կլանէ մեր բոլոր ուշադրութիւնը, եթէ պատահի որ ոռոսական զօրքերը քաջուին Հայաս. տանէն, ինչպէս այդ եղաւ 1917ին, Հայաստան պիտի կրնայ իր սեղմ սահմաններուն մէջ ինքզինք պաշտ. պանել, թէ չէ՝ դարձեալ զոհ պիտի երթայ նոր դաւերու: Հաւանականութիւններ են ասոնք որ հեռատեսութեամբ միայն կրնան անվտանգ դառնալ: Միշտ կը դառնանք, կը դառնանք ու կուգանք այն կէտին վրայ թէ ազգ մը պէտք է ինքզինք պաշտ. պանելու կարող ըլլայ եթէ կուզէ ապրիլ իբր պետութիւն ազատ ու ինքնիշխան: Մեր ներկայ վիճակին մէջ երբեք կարելի չէ մտածել թէ մենք այսօր բաւականին ուժով ենք մենք մեզ կարենալ պաշտպանելու. համար. կազմալուծուեցաւ մեր ազգային բա. նակը, սո՛րը կանճիտէ հայ ժողո. վուրդը մարմնապէս ու բարոյապէս. եթէ այժմէն չխորհինք ու չգործենք դարձանի մասին, ո՞վ պիտի կրնայ երաշխաւորել վաղը: Եւ մտամբով խորհելու, գործելու և ոյժ գոյացնելու համար պէտք է իրար օգնենք, պէտք է շարժինք իբր մէկ մարդ, մէկ զսպանակէ մղուած, իրատես ու հաւատքով ամբացած: Մօտ է արեւելեան խնդրի կար. գաղբման ժամը: Գանի խորհրդա. ժողովէն վերջ, հաւանական է որ սկսի Լոնտոնինը որ բացառապէս նուիրուած պիտի ըլլայ Սրբելիին: Միևնոյն ողբուկոծով չենք կրնար ներկայանալ աշխարհի դատաւորնե. բուն որոնք խղճով չէ որ կը դատեն, այլ մտքով և միտքերը համոզելու համար արցունքէն տարբեր բանա. ւոր ու հաւաստի միջոցներ պէտք է կիրարկել: Պատրաստուինք ու կազմակեր. պենք մեր ներքին անջատ ու իրե. բամբոժ ոյժեր. նոր հաւանականու. թիւններ կրնան իրականութիւն

դառնալ վաղն իսկ և մեզ չեն սպա. սեր իրենց խօսկան վազքը շարու. նակելու համար: Մենք պէտք է ամուր կառչինք մեր իրաւունքին, բայց իրաւունքն ալ պէտք է ամուր կառչի ոյժին: Թ. ԵՂԻՇԷ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԳԵՐԷՆ Ականատեսի օրագրից VIII

Մեր նահանջը սկսեց ալ թեից. ամբողջ ճակատը ետ քաշուեցաւ. մեր զօրաժասեր տեղաւորուեցան թալիպ, Թալիյ և կոչ գիւղեր. Զրդ գունդը բռնեց արարատեան դաշտ երկաթուղայով մինչև Արաքսի ափ. Ա. գունդ Աշտարակ, իսկ Սեպուհի բրիկատան կարաքիլիսէի վրայով քաշուեց Դիլիջան: Մեր բանակը մասամբ քայքայուեց. ունէ լուրջ դե. մագրութիւն անհնար էր. երկրի կէս մասը իր շտեմարաններով անցած էր թշնամու ձեռք. երեք հարիւր հազար ժողովուրդ թողնելով տուն տեղ քաշուեց արարատեան դաշտ կամ կարաքիլիսէի շրջան. վերջինս զբաւուեց Տաճիկներու կողմէն: Ըս. տեղեւեց քառասային գրութիւն. թըշ. նամու բանակը կապառնար մայրա. քաղաքին. երկրում կապառնէր ապրա. տամբութիւն մեծամասնականներու կողմէ. բոլշևիկ ներկայացուցիչներ կը պահանջէին երկրի սովիէտացու. մը. խորհ. Ռուսիաի ներկայացուցիչ Լըկրան ուզեց մասնակցել Ալեքսան. տրապոլում տեղի ունենալիք հաշ. տութեան բանակցութեանց ուր արդէն մեր պատգամաւորներ մեկ. նած էին և տանկական պատգամա. ւորութիւնը Գարապէթիբի նախա. դահութեամբ կապասէր և այլն և այլն: Բոլոր ճակատներու վրայ կռիւ. ները զաղբած էին. զինպագարը տեւելու էր մինչև հաշտութեան բա. նակցութեանց վերջաւորութիւնը: Երկու ամիս տեղ շարունակական կռիւններէն ազդուած, մօտաւորապէս

յոզնած, ուժասպառ եղած էի. և մանաւանդ մեր պարտութիւնը ու երկրում ցայտուն կերպով երևան եկած բոլորէվրոպի ոտնձգութիւնը վերին աստիճանի ազդեցով իմ վրայ, քայքայած էին իմ հոգեկան վիճակը. անհրաժեշտ էր մի փոքր հանգստանալ մանաւանդ որ ռազմական գործողութիւն չկար. իբր այդ նոյեմբեր 26ին փութացի վաշտապետին քով պարզելով հոգեկան վիճակս, խընդրեցի մի քանի օրւայ արձակուրդով Երեւան երթալ. վաշտապետը որ շատ բարի հայրենասէր անձ մըն էր, չմերժեց. նոյեմ. 27ին իրմէ երկտող մը վերցնելով թալիւէն կօշկուզամ գնդապետին ներկայանալու համար. գնդապետ պ. Միրիմանեան տեւալի վրայ յենւած 6 օրւայ արձակուրդ կուտայ. նոյն օր գիշերւայ ժամը 9ին Երեւան կը հասնիմ. Շատ պարզ ու բնական էր որ մեր պարտութիւնը խորապէս ազգած էր մայրաքաղաքին վրայ. Երեւանը բոլորովին կորսնցուցած էր այն թարմութիւնը որ մենք ապրեցանք. սա բնական, անխուսափելի փոփոխումն էր որ անմիջապէս աչքի կը զարնէր. ապա աչքի կը զարնէր այն որ պատերազմի ու պարտութեան կօշմարը իր ճնշիչ ծանրութեամբ իջած էր հասարակութեան վրայ. Դահլիճի փոփոխումը, հաշտութեան բանակցութիւնները, ռուսական կարմիր բանակի կեդրոնացումը Հայաստանի սահմաններուն վրայ, մեր հասարակութիւնը դրած էին շղայնոտ ու սպասողական դրութեան մը մէջ. բոլորը ակնապիչ կապասէին քաղաքական այդ վերիփայլումներու ելքին. վրացիների նոր դահլիճը քաղաքական կեանքի տարածերժ պայմաններում երկրի ղեկը ձեռք առնելով ճշմունց էր մի կերպ դուրս գալ տիրող քոտսից. Հայաստանին, հայ ժողովրդին կապառնար երկու փտանգ անխուսափելի կերպով. մէկին կամ միւսին պիտի ենթարկուէր. և հետեւաբար նոր դահլիճը աշխատում էր խուսափել նոր արեւմտահայկ. թիւններից ու մի կերպ երկիրը ազատել այդ վտտ դրութիւնից: Կառավարութիւնը հաշտութեան բանակցութիւններում թիրաքերուն ըրաւ ամէն հնարաւոր զիջում, բայց այդպէս կարելի չէր վստահ ըլլալ որ թիրաքեր Երեւանի վրայ արշաւելու իրենց ծրագրէն ետ կը կենան քանի որ իրենց չարագործ ձեռքը կտրող ոյժ մը չկար: Մեզի մօտ, մեզի հետ յարաբերութեան մէջ եղող սովետական Ռուսիան էր որ, ինչպէս զի տենք, դաշնակից էր քէմալիստնե ղուն և այդ դժոխային ծրագիրը կամուրջ նոյժ ինքն Մոսկուան էր և որ տեսնելով իր սարքած խաղի յաջող ելքը, չէր քաշուում ամբողջացնել իր ծրագիրը և իբր այդ իր 11րդ

զորաբանակը Բագուից քաշելով կեդրոնացուց Հայաստանի սահմաններու վրայ: Հայաստանի կառավարութիւնը երկու շարիքի միջև կանգնած էր. եթէ դիմադրէր կարմիր բանակին, միւս կողմէ Գէմալի բանակը կը մտնէր Երեւան. այդ պիտի նշանակէր մեր ժողովուրդի ֆիզիքական գոյութեան փճացումը. չդիմադրէր, անխուսափելիորէն կարմիր բանակը պիտի մտնէր Հայաստան ուր կը վրտային նրանց գործակալներ, ուր նրանց գրգռութիւններ տիրապետում էին: Հայաստանի կառավարութիւնը այս ծանր կացութիւնից դուրս գալու միակ միջոցը գտաւ այն բանի մէջ, որ առանց աւելորդ արիւնահեղութեան երկիրը յանձնեց բոլորովին իշխանութեան:

Գ.Ա.ՐՈՒՆԻ
1921, Թաւրիզ

Է.ՋՄԻԱՍՏՆԻ ՀԱՄԱՐ

Լոնտոնէն մեզ կը տեղեկացնեն յունվար 1ին.

«Երէկ Լոնտոնի Հայերու հոգեւոր հովիւ Գեր. Աբէլ ծ. վարդապետ հետեւեալ հեռագիրը ստացաւ Թաւրիզի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսէն.

Էջմիածինը սուլէն փրկելու համար, կը խնդրենք որ հեռագրով 300 սմէրլիս փութացնէք, որպէսզի հացահատիկ դրկենք:

Յուսալի է որ Գեր. Աբէլ ծ. վայս շարժումը ընթացքին յաջողի այդ դուժարը ձեռք բերել բարեսէր ու Մայր Աթոռի գոյութեան նախանձախնդիր ազգայիններէն և հեռագրով հասցնել Թաւրիզ. որի համար ստիպուած է դիմումներ կատարել ամէն կողմ:

Այնքան դժբախտ ազգ մըն ենք, որ նոր տարին անգամ սովի աղաղակ ներով կողոշուենք:

Մաղթենք որ գէթ տարուայ շարունակութիւնը աւելի յուսադրական ըլլայ մեզ բոլորիս համար ազգովին»

ԿԻՂԻԿԻԱ

Առանաէն Ֆրանսացի պաշտօնեայի մը Մարսելի իր մէկ բարեկամին գրած նամակներէն թարգմանաբար կը քաղենք հետեւեալները.

1 դեկտ. 1921

Գէմալականները այսօր հոս պաշտօնապէս հաստատուեցան և թըրքական գրոշակը պարզուեցաւ կառավարչատան վրայ:

Մեր զօրքերը դեռ հոս են, բայց աստիճանաբար պիտի քաշուին այն պէս որ դեկտ. 25ին պարպումը լրացած պիտի ըլլայ:

Քաղաքին մէջ Հայ չէ մնացած. այսպիսի կատարելալ արտագաղթ մը ոչ ոք չէր սպասեր:

Այսօր գրոշակը ժամը 10ին պարզուեցաւ և գրէթէ անմիջապէս յետոյ անձրեն ու քամին սկսեցին. հիմայ իրիկուն եղաւ և դեռ կը շարունակուին:

16 դեկտ. 1921

Երկու օր առաջ (դեկտ. 14) Պէյրութէն հրաման եկաւ որ բոլոր գաղթականները որոնք Մէրսին խը ճողուած էին, ճամբայ հանուին Փրանսական հոգատարութեամբ: Անմիջապէս հարկ եղած կազմակերպութեան ձեռնարկուեցաւ. սպաններ, պաշտօնեաներ, գրած զրկուեցան Մէրսին, այդ գործը շուտով գլուխ հանելու: Հոս 100 Հայ չէ մնացած, մինչդեռ առաջ 50,000է աւելի էին: Փախստականները Սիրիա պիտի զրկուին:

Կամաց կամաց սկսաւ ցուրտ ընել այստեղ. մինչև 13 աստիճանի իջաւ ջերմութիւնը. սակայն ժամը 10էն մինչև 4 հիւսնալի արև մը ունինք: Հեռուն՝ Տարբուի բարձունքները ձիւնով ծածկուած են և հարշագեղ աննձան տեսարան մը կը պարզեն: Ափսոս որ այս դրախտանձան երկիրը իր արժանի տէրերը չունեցաւ:

Հիմայ ամեն ինչ փոխուած է այս տեղ և մարդու սիրտը կը խառնուի այդ փոփոխութեան ի տես:

ՓԱՌԱՒՈՐ ԴԱՍ ՄԸ ԵՒՍ

Illustrationի 31 դեկտ.ի թիւին մէջ կը կարդանք՝ կարճ բայց շատ գեղեցիկ նկարագրութիւն մը, որ փարիզեան պատկերազարդ մեծ շաքարածեղի թղթակիցը կը դրկէ Քանստայի Քէպէք քաղաքէն ուր կը գտնուէր Մարաշխտ Ֆօշ դեկտ. 13ին Քանստական 22րդ գունդի գորանցքին ներկայ գտնուելու եւ այդ գունդին քանի մը ամենաքաջ սպանները, որոնք կռուած էին Ֆրանսական ճակատին վրայ, պատերազմական խաչով պատելու համար: Թղթակիցը կըսէ.

«Զօրանցքէն յետոյ ի յարգանս Մարշալ Ֆօշի՝ գանազան ուղերձներ կըլան քաղաքին պաշտօնական անձնաւորութիւններէն եւ երբ կարգը կուգայ Ֆրանսական Բարեգործական Ընկերութեան նախագահին՝ յանկարծ մէկը, սեւ հագած՝ բազմութիւնը ճեղքելով եւ նախապէս պատրաստուած պաշտօնական ծրագիրը (protocole) ոտնակոխ ընելով կը յառաջանայ եւ ծայր կը բարձրացնէ: Հայոց Պատրիարքին ներկայացուցին էր, որ կուգար իր Հայրենիքին դատը պաշտպանելու Ֆրանսայի մեծ զինուորին առջեւ, այն Ֆրանսային, որ Աստուծոյ զինուորն էր: Բանախօսը խորապէս յարգելի էր, իւր կողմ յուզիչ բայց էնկիւրի դաշնագրէն քանի մը շաքար յետոյ, Կիլիկիոյ պարպումէն յետոյ եւ գլխաւորաբար բըրիտանական հողի վրայ ինչպէ՛ս ընդունի այս լուզիչ խօսքերը որ դժուարին կացութեան մը կը մատչին Մարշալը. ի մէջ այդոք ըսաւ ան. «Պարոն Մարշալ, ըսէք մեր հայրենակիցներուն թէ Կիլիկիան Ֆրանսային է եւ թէ ան Ֆրանսայի ուր կը գտնուի թիւրքերու զապալտութիւնը: «Գերապատում մը չնորհակալ եմ Ձեր խօսքերուն համար ան Ձեր փափաքները նկատի կառնեմ. ի անդուք այ Ձեր կողմէ ըսէք Ձեր հայրենակիցներուն թէ ժողովուրդ մը տուտկապարտական է իր քրիստոս պաշտպանելու: Ազատութիւնը ազալելու արտաքին այլ կը գրաւուի (Un doit d'abord se défendre lui-même, la liberté ne s'implore pas, elle s'acquiert.)»

Ֆրանսային է եւ թէ ան Ֆրանսայի ուր կը գտնուի թիւրքերու զապալտութիւնը: «Գերապատում մը չնորհակալ եմ Ձեր խօսքերուն համար ան Ձեր փափաքները նկատի կառնեմ. ի անդուք այ Ձեր կողմէ ըսէք Ձեր հայրենակիցներուն թէ ժողովուրդ մը տուտկապարտական է իր քրիստոս պաշտպանելու: Ազատութիւնը ազալելու արտաքին այլ կը գրաւուի (Un doit d'abord se défendre lui-même, la liberté ne s'implore pas, elle s'acquiert.)»

Թղթակիցը կաւեցնէ. այս չէր նոր կը սպասէր խեղճ եպիսկոպոսը, ինչ կրնար պատասխանել՝ տուտկա մանր յարգող եւ իր պատասխանաւ թեան գիտակից զինուոր մը. ո՛չ մեր մերժում մը, ոչ ալ սուտ խոստումնայ իրականութիւնը յիշեցնող կոշտ հեռատես բարեկամի մը կողմէ խորհուրդը, անուասիկ Ֆօշի բնուէր եւ արդէն ասիկա իբր պետ խօսալայէ գործել չէր:

Հայ ժողովուրդին պաշտօնական կայացուցիչները՝ աշխարհական թէ դեցական՝ ազգային գանազան դիտելու առթիւ՝ օտար ամենաքարծր տական մարդոց կողմէ քաղաքական սեր ստացած են: Այդ դասերէն մեծ հեղինակութիւն կողմէ զրկուած Քանստայի Ֆօշի ճշմարտապէս գնահատութեան արժանի արտաքին գաւառ տակաւին բաւական չէին: Բնակցելու թէ մեր փրկութիւնը հասնալու գատութիւնը ամենէն առաջ մեզմէն սերունք, հետեւաբար ներքին լուրջ միութիւնը գոյացնելու ենք, եւ յետո՛ւ անապահուածներն, որ իր մասնուան եւ շահակնդիր հաշուեկարգարք կրնէ, նկատի առնելով գլխաւոր պարական ոյժը:

Աւելորդ է մեկնաբանութիւն: Պ. ՀԱՄԱՐ

ՌՈՒՓԱՅԷԼ—ՄՈՒՐՈՍԵԱՆ ՎԱՐԺՍՐԱՆԸ ՓՐԿ

Խնդրանք կամ կոչ մը կայկառցու թաթախոյ, Սուրբաբայու, Ռանդի մէջ Սինկափուռի կային, կայիում Հայերուն շացնէ

Էս տոյն վարժարանը մօտէն կը նամ. 1906ին ընտանեօք քանի աշակաւնոր մօտ բնակեցանք, դրացի մեր գաւակին որ թոշակով քանի հոս մնաց: Տարիներէ ի վեր հիսնաւարաններէն ու ուսուցիչներէն մեր ու բարեկամներ ունիմ: Փառաւոր շքանք վերջացաւ երբ գէն տեղափոխեցին Վենետիկ: Անտարած դերը ընդհանուր հայ մէկը համար ակնկալուածէն ու կարելի չէր պակաս է եղած. սակայն այժմ մեր վերջէր պրպտելու ատեն չէ: Թերթերէն շապէս յայտնի է որ Վենետիկ Միւստեան վանքը եւ հայ դպրոցը հոգալ մօտ են: Իտալացի եպիսկոպոս տանի երկար ատեն Պօլիս էր, առաքելու մունի իբր Վատիկանի վերահսկող գաւառարեան ուխտի վերջին անկախացին, նշոյր մարտու, հայութիւնէ հեռաւ եւ վատիկանութեան գերի շինելու նախով միեւնոյն ժամանակ Ռաֆայէ Մուրատեան դպրոցին:

Հնդկահայերուն կը մնայ իրենց գիշերուոցը պաշտպանել, Մաքրասի Քարսի օրնալէն Ռաֆայէի ու Մուրատեան օրնալէն պահանջել

անասնոր երկու երեք ուսուցիչ խնդրել է, որ երկու երեք ուսուցիչ խնդրել է, որ երկու երեք ուսուցիչ խնդրել է...

անից մինչև կոնֆերանսի փակելը կը տեղափոխուի Կանն և հետևեալ շաբաթ աւելի տեղեկութիւններ կը հաղորդեմ, թէ ինչպէս քարածուխն ու ոսկին առաջնակարգ, կենսարար հարցերը են և այս կոնֆերանսում:

S. ՆԱՋԱՐԵԱՆ
Cercle Nautique
Presse Bureau. Cannes

S. Յրանգէն Պոլեոն հեռագրով կանչուեցաւ Գան ուր, կերելի, արեւելեան խնդրի մասին տեղեկութիւններ պիտի տայ Գերագոյն Խորհուրդին:

Գերագոյն Խորհուրդը գերման կառավարութեան պատուիրակներ ուղարկելու մասին լրջաբար Գան կը հասնին այսօր:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱԻ
ՄԻՍՏԵՍԻՆ-ՆԱՆՏԵՐԻՆ

Պրիմօգրքը, 20 դեկտ. 1921

Ամերիկահայութիւնը եւ տարբեր տեսայ ինչ որ կուզէի կամ կը յուսայի տեսնել. մեծագոյն մասին, մանաւանդ երիտասարդութեան մէջ, ազգային գաղափարը մեռած է. նորութեան ու նորանուութեան սիրահար՝ եստուր, կուսակցականներ են: Դրամասիրութիւնը, կամ աւելի ճիշդ՝ զրամապաշտութիւնը ծայր աստիճանի հասած է հոս. ունէ մէկ ատեն, ունէ մէկ տեղ չտեսայ որ գրամը այնչափ արժէք ունենայր, որչափ հիմայ հոս. «չկայ», «չունիմ» բառերը որ մեր մէջ քիչ մը ամօթ կը նշանակէին, հոս բոլորովին ընդհանրացած բաներ են: Չարմանալի է որ անցեալին մէջ հանգանակութիւնները ինչպէս աւանակ պատկանելի գումարի մը կը հասնէին: Թուէս 8-10 օր առաջ Հ. Կ. Խաչի տեղոյս մասնաճիւղը կառավարութեան արտոնութեամբ հանգանակութիւն մը բացաւ և զիտելի է որ օտարներ աւելի կը հետաքրքրուին ու կուտան քան Հայեր, և այն քանի մը հոգին ալ որ մասնակցեցան հանգանակութեան, կամ մասնաճիւղին կողմէ մասնաւոր գիւմում եղած էր և կամ օտարներու առջև ամօթի զգացումն էր որ մղեց քանի մը սէնթ տալու:

Հայ լեզուն բոլորովին ազաւազուած է. անգլիերէնի և հայերէնի խառնուրդ մըն է դարձած, այնպէս որ անգլիերէն լեզուին քիչ շատ ծանօթ չեղող մէկը կամ չպիտի հասկընայ ասոնց խօսակցութիւնը և կամ զօրութեամբ պիտի հետեցնէ մէջ ընդ մէջ գործածուած հայերէն բառերու իմաստն:

Ամուսնական կեանքի վրայ շատ

քիչ կը խորհին և երբ գրպանին քանի մը սէնթ կայ, կը ծախեն Ամերիկահայերու հետ սինեմաներու կամ թատրոններու մէջ և աւելի սիրահար են անկանոն կեանքի մը քան թէ մաքուր անբիծ ընտանեկան բոյնի մը: Մաս մը մինչև 40-45 տարեկան չափահասներ, տակաւին ամուրի կեանքին սիրահար՝ մտքերն են անգամ չեն անցնէր ընտանիքի և զաւակներու տէր ըլլալ. իսկ անգլիերէն ուրիշ մաս մ'ալ ամուսնացած օտարուհիներու հետ, ձուլուելու վրայ են արդէն. անցեալ օր տեսայ հայ երիտասարդ մը 25-27 տարեկան որ ամերիկահայի մը հետ ամուսնացած է և ունի երկու զաւակ որոնք բոլորովին անգլիերէն կը խօսին. փորձուեցայ հարցնել թէ ինչո՞ւ արդեօք փոքրերուն հայերէն խօսիլ չեն սորվեցներ. պատասխանեց. «Եթէ երբէք (Ստուտա՞ծ մի արասցէ) օր մը Հայաստան երթան հոն կը սորվին, իսկ եթէ հոս մնան, արդէն հայերէնի պէտք չեն ունենար»: ահաւասիկ տիրապետող մշտայնութիւնը, Հանդիպեցայ կարգ մը երիտասարդներու ալ որոնք ամուսնացած են կամ կուչեն ամուսնանալ հայ օրիորդի հետ ոչ թէ անոր համար որ հայուհին գերագուս կը համարին Ամերիկահային, այլ որ ըզրեւոյն ինքնապէս ինքզինքնին անկարող կը կարծեն Ամերիկահայի հետ ապրելու:

Մեծ մասով գործաւոր են, առանձին խանութ կամ գործ ունեցողներ չտարիչ են. գործաւորներու մէջ ալ այնչափ ազգու գիրք չունին. իրլանտացիներ և փոլանտացիներ աւելի կը նախընտրուին քան Հայեր:

Գալով կուսակցական կուրիներուն՝ այդ արդէն ընդհանուր ախտ մը եղած է հայութեան համար, իսկ այդ ախտաւորներու ամենաբարձր ներկայացուցիչն է Ամերիկահայութիւնը. միշտ վիճաբանութիւն, միշտ կռիւ, վեճ, քէն և թշնամութիւն: Հացը ուտել չգիտցողը ուրիշը քննադատելու կենք, կեանքին մէջ սէնթ մը չտուողը՝ հաշիւ պահանջել կուզէ: Չզարմանաք եթէ ըսեմ որ դեռ չաբաթ մը առաջ հոս Դաշնակցական կարմիր Խաչ և Հնչակեան կարմիր Խաչ կային և հազիւ կարելի եղաւ Հայ կարմիր Խաչ անունին տակ միացնել և յուսայի չէ որ երկար պիտի տևէ: Հոս մարդ այն գաղափարը կառնէ թէ դաշնակցական չեղողները այն համոզումը ունին կամ այն պէս կը վարուին Դաշնակցութեան դէմ որ ասոնք հայ չեն և նոյն իսկ «Թիւրք գաշնակցութիւն» կանուանեն: Կարծես թէ իրենք ծնած են մասնաւորապէս Դաշնակցութեան հակառակելու համար. ասոր մէջ կը տեսնեն ամենամեծ ազգասիրութիւնը. անցեալները պարոն մը թերթ կարգացած ատեն հանդիպեցաւ «Գաշնակից» բառին և «Գաշնակցական» կարծելով թերթը կրակը նետեց, կեանքին մէջ «կուսակցութիւն» բառը չսողը՝ զինուած է Դաշնակցութեան դէմ: Այլ կրնաք երևակայել թէ հակառակութիւնը, պառակտումը ինչ աստիճանի է հասած մեծ մասով այս կիսակիրթ և քինախնդիր մարդոց մէջ:

ցութիւն» բառը չսողը՝ զինուած է Դաշնակցութեան դէմ: Այլ կրնաք երևակայել թէ հակառակութիւնը, պառակտումը ինչ աստիճանի է հասած մեծ մասով այս կիսակիրթ և քինախնդիր մարդոց մէջ:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն

Ա. Գ. Բ.

Ս. Իմնդեան տոնական օրերուն Մատրան Ժամասացութիւնները տեղի պիտի ունենան ըստ հետագայ ցուցակի. Գունվար 18 Գ. Զրաքարոյցի Ս. պատարագը երեկոյեան Ժամ. 3 Էն 7: Գունվար 19 Է. Ս. Իմնդեան Ս. օր առաւօտեան Ժամ. 8 Էն մինչև 12: Գունվար 20 Ուր. (Մեռելոց) Բ. օր Ս. Իմ. առաւ. Ժամ. 9 Էն մինչև 11: Իսկ Գուն. 17 եւ 18 Գ. եւ Գ. օրերը առաւօտեան Ժամ. 11 Էն 12 Մատուր բաց է խստովանութեանց համար:

Հոգ. հովիւ Մատթ. քհ. ՀԵՔԻՄԵԱՆ

Գաղութիւն սիրուած անգամներէն Տ. կարապետ Սեդեան կարծառե հիւանդութեան մը ջերջ իր մահկանացուն կնքեց յունվար 6 ի ուրբաթ օր 46 տարեկան երիտասարդ հասակին մէջ. Թաղումը կատարուեցաւ շաբաթ օր հայ և օտար բարեկամներու ստուար յուզարկաւորութեամբ մը: Մարմինը զետեղուեցաւ իր ազգական Տ. Բակոր Սեդեանի ընտանեկան գամբանին մէջ:

Մեր խորին ցաւակցութիւններ հանդոցեալի պարագաներուն:

ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԷՆ

Ի կալկաթայ, Ի 6 նոյեմբերի 1921

Ի թիւ 16 պատուական շաբաթաթերթի կարգացի հետաքրքրութեամբ գնամակ լաւ բարեկամին իմոյ Պարոն Ստեփաննոսի Տէր Մեարդը Գրեգորեան որ է Բերայումն Անգլիոյ՝ յորում խառն քննադատեալ իմ կարծեցեալ զանցառութիւն վասն չիլիւրոյ ասէ ի ճառիս զանուն և զվստատակս իւրոյ բազմբարխտ վարժապետին Պարոն Թագէտոսի Տէր Ստեփաննոսեան է հանդիսի «Հարեւրածայ Գործիչի Մարդասիրական ձեռնարանի» քաղաքիս որ յ'2 Ապրիլին անցելոյ:

Ասէ յարգելի նամակագիրն թէ «յակնէ յանուանէ» յիշատակեալ եւ զանունս միւս հայ վարժապետացն ձեռնարանի և «բարձի թողի արած» զանուն իւրոյ «գորովիք երկարամեայ աշխատող Թագէտոս վարժապետի»: Այլ եթէ փոքր ինչ ուշադրութեամբ և ազատի կրից ընթեանոյր Պարոն Ստեփաննոս Տէր Մ. Գրեգորեան զայդ մասն ճառին իմոյ, տեսանել տեսանէր թէ զխոսիլն անտեղի էին իւր այն քննադատութիւնք և անհիմն իսկ իւր կարծիքը եւ յիշատակեցի միայն զանուանս «Հանդուցեալ» հայ վարժապետացն և ոչ կենդանեաց, և ի զիտուութիւն նամակագրին և համայն ընթերցողացն «Արմէնիա»ի, աւելորդ չհամարիմ տալ ասանոր զայն յօդուած ճառիս յորում մասնաւոր յիշատակութիւն լինի անուանց հայ վարժապետացն ձեռնարանի օրինակ զայս: «Յարազուարթ ծաղիօք երախտագիտու-

Քան ծածանեցին և յիշատակք ի Տէր
հանգուցեալ բազմավաստակ հայ վարժա-
պետացն ճեմարանին՝ Յարութիւնի Գա-
լուցեան, Յովհաննիսի Յարութիւնի Իսա-
հակ Աղանուրեանց, Տիրացու Մարտիրոսի
Մկրտիչ Դաւթեանց, Մեսրոպայ Դաւթե-
անի Թաղիադեանց, Յովհաննու Ավդալ-
եանց, Դաւթի Ֆրիդոն Մէլիք Բէզլար-
եանց, Մկրտիչ Աղաբէգեան, Կարապետի
Պետրոս Մուրատեան և Յարութիւնի Ա-
սատուրեան որք զամս իննսուն վառ և
անէջ պահեցին զհրազն Մեսրոպեան զըպ-
րութեան ի ճեմարանին»:

Արդ ըստ որում կենդանի էր տակաւին
Պարոն Թաղէոս վարժապետ, զիւրդ կա-
րէի յիշել զանուն նորա ի շարս հանգուց-
եալ հայ վարժապետացն ճեմարանին: Նը-
մին իրի յիշատակեցի և զանուն յաջորդի
նորին, Պրն. Վաղարշակայ Գալուստեան,
որ յետ տասնամեայ պաշտօնավարութեան
ճեմարանին որպէս ուսուցիչ հայ լեզուի,
հրաժարեցաւ երկու ամօք յառաջ և զնաց
բնակիլ ի Քալիֆօրնիա ընտանեօքն հանդերձ:
Անշուշտ ունի ի զայրոյթ բրդիլ և Պարոն
Գալուստեան վասն եպեթիլի զանցառու-
թեանս, այլ «սպան զուր» շատ կայ:

Չարմանամ թէ բարեմիտն Պարոն Ստե-
փաննոս Տէր Մեսրոպ Գրիգորեան բոլոր
նրամտութեամբն հանդերձ, զիւրդ չկա-
րաց տեսնել զյայտնի պատճառն որով
անուն իւրոյ ամենասիրելի վարժապետին
անյիշատակ մնացեալ էր յինչն ի շարս
համայն հայ վարժապետացն ճեմարանին
յընթացս անցեալ հարիւր ամաց, ուստի
ցաւիմ նշմարել աստանօր թէ ըստ բանից
իւրոց իսկ՝ «աչքերն զինքն խարեցին»:
Առիթ բարեպատեհ գտեալ այլ ևս քարըն-
կէց առ իս լինի ինտոյ յարգելի յողուածա-
գիրն ասելով թէ «արարք իմ չէին արգա-
րացի» նոյն իսկ եթէ ունենայի բանաւոր
պատճառ իսկ վասն կամայ զանցառու-
թեանս, այլ թէ որքան անհիմն են սոյն
կարծիք և ենթադրութիւնք նամակագրին
ի յայտ գալ ի բանից նորին իսկ զի ասէ
թէ ի հանդիսի նուիրման իւղաներկ պատ-
կերի նոյն Պրն. Թաղէոս վարժապետի առ
Մարգարական ճեմարան մեր աստ յամ-
սանն Մայիսին, 1919, նուաստութիւն
իմ էր որ ներքողական ճառի իմով զըր-
ւատեցի զարժանի և զարդիւնս իւրոյ
բաղձալաստակ վարժապետին, զի թէպէտև
չեղև ինձ բաղդ աշակերտիլ յոտս նորին,
այլ որպէս մի ի բարեկամաց նորին և
համակրողացն իսկ, տածեալ եմ միշտ
ճշմարիտ յարգանս առ նա, ուստի անհիմն
կարծիք Պարոն Ս. Տէր Մ. Գրիգորեանի
չինչն յաղագս իմոյ կարծեցեալ զանցա-
ռութեան, զու իմա հակակրութեան, լոկ
նախապաշարեալ մտաց են արդիւնք և ոչ
այլ ինչ: Երևի ի խոր խոցեալ է Պարոն
նամակագրին զի սովորական զանցառու-
թեամբ իմով չեմ յիշատակեալ ի ճառի
իմում և զանուն իւր ի շարս յառաջագէմ
և յաւէտ պահանաւոր աշակերտացն ճեմա-
րանի որք լեալ են յետ ուսանողական կե-
նացն՝ վարժապետք, պատմիչք և զրոգէտք՝
զի մասնաւոր իմն պարծանօք յիշատակէ
Պարոն Ստեփաննոս Ս. Մ. Գրիգորեան
յակզբան անդ նամակի իւրում թէ և ինքն
լեալ է զամս երկուս (1883-1894) որպէս
գլխաւոր օգնական ուսուցիչ՝ անդ ի ճե-
մարանին: Արդ որովհետև զբեմ զամբող-
ջական պատմութիւն հարիւրամեայ գոյու-
թեան ճեմարանին, ունիմ գովութեամբ յի-
շատակել և զվաստակա լաւ հայրենակցին
իմոյ Պարոն Ստեփաննոսի Տէր Մեսրոպ
Գրիգորեան յողուտ և ի փառս ազգային
վաստակներս այլ այնու պայմանաւ սակայն
զի ոչ յարդիւնս անցէ նամակագրին յա-
ւէտ վշտացեալ զիւրն սպասնալիս ընթա-
նալ զաւիդ մեծապանծ փիլիսոփային Գե-
մասթէնէի «մշակելով զգործելակերպ և
զձիրս նորին և նոյնօրինակ խօսելոյ» որ-
պէս տեսնել ի վերջբան զրութեան նորա,

զի ես ոչ քերթող եմ և ոչ մատենագիր
այլ պարզ հնարար մի ուստի և չկարեմ
ի վէպ և ի վեր գալ ընդ այնպիսի որք
կարեն դիւրաւ մշակել «զձիրս և զգործե-
լակերպս Գեմասթիւնեանց» և այլոց յոյն
փիլիսոփայից և «ըստ այնմ խօսիլ»: Որ
ունիցի սկանչս լսելոյ՝ լուիցէ:

Յարգանօք
Մեսրոպ Յ. Սէթեանծ
(Նոր. Զուղայեցի)

ԳՐԱՆՈՍՏԱԿԱՆ

Վ. Սրուանձտեանց. — Հայոց երգեր.
Ա. պրակ. Փարիզ, 1921. գին 8 ֆրանկ:
Հեղինակին մօտ՝ 43, rue La Condamine
Paris (17e)

Պ. Վ. Սրուանձտեանց՝ Կոմիտաս վ. ի
հինգ սաներէն մէկը՝ որ տարիէ մը ի վեր
կուսանի Փարիզ՝ նշանաւոր վարպետ ե-
րաժշտական պ. René Lenormand մօտ՝
կարճ ժամանակուայ միջոցին իբր արդիւնք
տուած է Հայոց Կրգերի իր Ա. հաւաքա-
ծոն, որ պարունակում է 6 երգ:

Ս. եղանակը՝ Սիրուհիս՝ աշուղային է և
իր դաշնաւորութիւնը սիրուն է թէ և մի
քանի accordները կարող էին աւելի յաջող
լինել:

Չրդը՝ Այագեալ՝ ժողովրդական եղանակ
է, որ պարունը զրի. անցրած ու դաշնաւոր-
ած է և սիրուն կերպով հեակած է իր
անզուգական վարպետ Կոմիտաս վարդա-
պետի գաղափարին Հայոց եղանակներին
յարմար դաշնաւորում փնտոելով, որպէսզի
եղանակին զուտ բովանդակութիւնը ազատ
մնայ և յիսկաթիւրուի եղանակին հակառակ
արեւմտեան ներդաշնակութիւններով:

Յրդ եղանակը՝ Սիրերգ՝ dans le style
populaire քաղցր եղանակ է. ափսոս, որ
դաշնակը կրկնում է եղանակը:

4րդը՝ Բէկգատու աղցիկ՝ զուգերգ է
սօպրանօի և տենօրի համար ժողովրդային
եղանակ և շատ յաջող է դաշնաւորած:

5րդ և 6րդ երգերը Ողբ ու Ծովը ներ-
չնչուած են սքանչելի բանաստեղծ Ա. Ի-
սահակեանի երկու քերթուածներէց, որ
նոյն վերնագրերը կը կրեն:

Հրատարակութիւնը մաքուր է, տետրը
զարդարուած է հակական հին ձևի տա-
նորով, որ շատ զեղեցիկ ու ճաշակաւոր
են ելած:

Ուրախութեամբ կոչուենք այս տետրը,
որ շատ օգտակար նիւթ կը բերի մեր երա-
ժշտասէր հասարակութեանը և կը մաղթենք
որ շուտ տարածուի մեր ժողովրդին մէջ:
Այսպէս աւելի ևս կը քաջալերուին թէ
պարոն Սրուանձտեանցը և թէ իր միւս
ընկերները՝ որոնք նոյնպէս գործեր ունին
պատրաստ, որպէսզի կարողանան շարու-
նակել Կոմիտաս վարդապետին գործը և
աւելի ևս նիւթ բերին թէ զուտ ժողովրդա-
կան և թէ ազգային երգերի, որոնց այն-
քան կը կարօտի մեր ժողովուրդը:

Մարգարիտ ԲԱՍՏԵԱՆ
Փարիզ, դեկտ. 28ին 1921

Պ Լ Զ Ո Ւ Բ

Ով որ կը փափաքի պղուր ուսել, Թող
դիմէ Արգար Արգումանեանին, 17, rue
des Dominicaines, — Hôtel de Langue-
doc, Թիւ 1 սենեակը, հոն կը ծախուի
լաւ խնամքով պատրաստուած հայրենիքի
ընտիր պղուր:

ԹԻՒՐԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լնկիւրիէն կը հեռագրեն յունվ.
7ին.

«Փոլնիաի և Թիւրքիաի միջև
տեղի ունեցած բանակցութիւններու
հետեանքով, պաշտօնական յարաբե-
րութիւնները պիտի հաստատուին
երկու երկիրներու միջև:

Լնկիւրիի կոռավարութեան ներ-
կայացուցիչ մը անմիջապէս պիտի
դրկուի վարչովի և փոլնիական ներ-
կայացուցիչ մը Լնկիւրի հասնիլը
կապատուի»

* *

Տ. Լոյս Ճօրճ Գանի մէջ իր խօ-
սած ճառով հայկական կոտորածներ
րու մասին ակնարկութիւններ ըրած
և Թիւրքիան գատապարտած ըլլա-
լով, Լնկիւրիի կոռավարութեան
Փարիզի ներկայացուցիչը զեկոյց
մը հրատարակել տալով հերքեր է

Տ. Լ. Ճօրճի խօսքերը, ըսելով թէ
Հայերու կողմէ եղած ապստամբական
շարժումներուն առթով ծագած ցա-
ւալի դէպքերուն համար Լնկիւրիի
կոռավարութիւնը ոչ մէկ պատաս-
խանատուութիւն ունի և թէ այժմ
Թիւրքերը իրենք է որ կը կոտոր-
ւին Յոյներու կողմէ և այլն և այլն:

ՆՍՄԱԿԱՏՈՒՓ

R. s. Montfaucon. — Ա. Խ.: Չեր ուղած
զիրքը սպառած է մեզ մօտ: Ի գիտու-
թիւն կը յայտնենք որ սովորութիւն չու-
նինք contre remboursementով գրեք շըր-
կելու: Բոլոր ապագարները պէտք է լինին
կանխիկ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՕՐՍՅՈՅՑ 1922 ԹՈՒԻ

Վնետիկ Միւսիարեանց տպարանը լոյս
ընծայ ամ է 1922 Թուի օրացոյցը որ զըր
պանի համար է և միջազգային. այնպէս
որ հետաքրքիրներու համար հակականսն
(Էջմիածին) գատ շահեկան պիտի լինին
նաեւ, լատինական, յունական, արաբա-
կան, հրէական և այլն տօներն և ամ-
սամիւրեր:

Քիչ Թուով ունենալով մեզ մօտ, ցան-
կացողները պէտք է փութան գնել անկէ-
Գին 1,75, Մարտէյէն դուրս 2 ֆր.

ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ԱՆՊՕՐԸ

Լոյս տեսաւ «Վերածնունդ» ի 1921
Թուականի Այսօր որ իսկապէս շքեղ
գործ մ'է: Հանրային, քաղաքական,
գրական և գեղարուեստական հայ գոր-
ծիչներ, Հայաստանի գեղատիպ տեսա-
բաններ, տարագիրներ և որբերի այլ և
այլ 200ի չափ նկարներ կը զարդարեն
այս գեղեցիկ ալպօմի էջերը որոնցմէ մէկ
քանին գունատիպ են: Գին՝ 10 ֆր. (11):

ԾԱՌՈՒ ԳԻՐԲԵՐ

Արմենիաի գրասենեկին մէջ ծախու կը
գտնուին ի միջի այլոց հետեալ հրատարա-
կութիւնները: Փակագծի մէջ նշանակուած
գիները Մարտէյէն դուրս զրկուելու համար

են, փոստի ծախքը մէջը հաշուած:
Նարարուած (recommandé) ծրարով
նալ ուղղող պէտք է ասոր ալ փոստի
վճարէ որ է 35 սանդիմ, 1 կրամի
կած մինչև 2 քիլօնց ծրարի համար

— Քաղաքական դէպքերը Հայոց
մտութեան մէջ. ճանօթ հրատարակու-
ել գործիչ Ա. Բսէն Միքայէլեանի ու-
նասիրական և շահեկան մէկ գոր-
գեղեցիկ տպագրութեամբ և զիւր
կազմով. 10 11):

— Սեպային առողջապահութիւն,
Թորոսեանի. շատ օգտակար ևս
ժեշտ հատոր մը, գեղեցիկ տպա-
թեամբ և ամուր կազմով. 10 (11)

— Սարսափի երկիրն մէջ.
«Ժուրնալ» Թերթի Թիւթակից Հանրի
պիի պատերազմի ընթացքին Հայա-
ու կողմից մէջ կատարած ըն-
պոյտին առնով գրուած յօդուած
հատոր մը, հայերէսի Թարգմանու-
պատկերազարդ, որ ցոյց կուտայ
Հայերու դիւցազնական կուրսերը:

— Կամաւորի Յիշատակարան
Օհանի. յիշողութիւններ կամաւոր
կեանքէն Հայաստանի մէջ. 5 (5,50)

— Հին Աստուածներ. Լեւոն
հուշակաւոր Թատրերգութիւնը. 10
— Հայրենի աղբիւրք. անուան
նաստեղծ Ա. Իսահակեանի ոտանաւ-
շքեղ տպագրութեամբ. 10 (11):

— Գրական Ասուխներ: Ա. —
«Հին Աստուածներ»: Բ. — Գրիգոր
րպի «Նորակէպեր»: Գ. — Գ. Վ.
ժանի «Հեթանոս երգեր»: Դ. — Ու-
դարեանի «Յայագալոյս»: Ե. — Յո-
նէս Սէթեան: 5 հատը (Ա. — Ե.) 4
7,50 (8 ֆր.):

(1913ին Կ. պօստի մէջ սկսած է ին-
րական Ստուիներ) կազմակերպ
Թիւրքաւոր ծանօթ գրողները երկու
վրայ հրատարակային ժողովի մէջ
դատական և շատազովական բանա-
թիւններ կը լինէին և մասնաւոր
կազմուած ժիւրի մը երկու կողմէ և
յետոյ իր եզրակացութիւններ կարծի եր-
տէր: Այդ ասուխներ տակաւին վե-
եալ 5 հեղինակների գործերին վրայ
և հրատարակուած էին երբ քաղաք
դատնադէտ հանգամանքներ եկան սօ-
ցնել մտաւորական յառաջդիմութեան Ու-
շարժում: Հրատարակուած Ասուխներ
մէջ քննադատական կամ ցատազով
բանաստեղծութիւններ ունին Տիկին Չ.
Ասատուր, Տօթ. Արմենակ Բարսեղ Հա-
Տիկին Չապէլ Եսայեան, Ռուբէն Յայն
դարեան, Գ. Չօհրայ, Վահան Թէքէյան
Գ. Խաճակ, Կոմիտաս վրդ., Եւաթար
սաքեան, Տիգրան Չեօկիւրեան, Յ.
Սիրուհի, Երուսնդ Օտեան և այլն):

— Մեր Խաչը, Տթ. Մ. Սալբիլոյս
տպագրութեամբ և խորհրդանշանոր
գեղեցիկ պատկերներով հատոր մը
պարունակէ նորակէպեր հայ տարու-
թեան յիշատակներէն. 10 ֆր. (11):

— Հայրենիքի Բացատրիկ. Հայաս-
Հանրապետութեան տարեկարծին աշած
1020ին հրատարակուած մեծադիր
հատոր մըն է, հայ հերոսներու,
վարներու և քաղաքական այլ գործ-
րու բազմաթիւ նկարներով: Գին 5 ֆր.

— Մեր Խաչը, Տթ. Մ. Սալբիլոյս
տպագրութեամբ և խորհրդանշանոր
գեղեցիկ պատկերներով հատոր մը
պարունակէ նորակէպեր հայ տարու-
թեան յիշատակներէն. 10 ֆր. (11):

— Հայրենիքի Բացատրիկ. Հայաս-
Հանրապետութեան տարեկարծին աշած
1020ին հրատարակուած մեծադիր
հատոր մըն է, հայ հերոսներու,
վարներու և քաղաքական այլ գործ-
րու բազմաթիւ նկարներով: Գին 5 ֆր.

— Մեր Խաչը, Տթ. Մ. Սալբիլոյս
տպագրութեամբ և խորհրդանշանոր
գեղեցիկ պատկերներով հատոր մը
պարունակէ նորակէպեր հայ տարու-
թեան յիշատակներէն. 10 ֆր. (11):

— Հայրենիքի Բացատրիկ. Հայաս-
Հանրապետութեան տարեկարծին աշած
1020ին հրատարակուած մեծադիր
հատոր մըն է, հայ հերոսներու,
վարներու և քաղաքական այլ գործ-
րու բազմաթիւ նկարներով: Գին 5 ֆր.

— Մեր Խաչը, Տթ. Մ. Սալբիլոյս
տպագրութեամբ և խորհրդանշանոր
գեղեցիկ պատկերներով հատոր մը
պարունակէ նորակէպեր հայ տարու-
թեան յիշատակներէն. 10 ֆր. (11):

— Հայրենիքի Բացատրիկ. Հայաս-
Հանրապետութեան տարեկարծին աշած
1020ին հրատարակուած մեծադիր
հատոր մըն է, հայ հերոսներու,
վարներու և քաղաքական այլ գործ-
րու բազմաթիւ նկարներով: Գին 5 ֆր.

— Մեր Խաչը, Տթ. Մ. Սալբիլոյս
տպագրութեամբ և խորհրդանշանոր
գեղեցիկ պատկերներով հատոր մը
պարունակէ նորակէպեր հայ տարու-
թեան յիշատակներէն. 10 ֆր. (11):

— Հայրենիքի Բացատրիկ. Հայաս-
Հանրապետութեան տարեկարծին աշած
1020ին հրատարակուած մեծադիր
հատոր մըն է, հայ հերոսներու,
վարներու և քաղաքական այլ գործ-
րու բազմաթիւ նկարներով: Գին 5 ֆր.

— Մեր Խաչը, Տթ. Մ. Սալբիլոյս
տպագրութեամբ և խորհրդանշանոր
գեղեցիկ պատկերներով հատոր մը
պարունակէ նորակէպեր հայ տարու-
թեան յիշատակներէն. 10 ֆր. (11):

— Հայրենիքի Բացատրիկ. Հայաս-
Հանրապետութեան տարեկարծին աշած
1020ին հրատարակուած մեծադիր
հատոր մըն է, հայ հերոսներու,
վարներու և քաղաքական այլ գործ-
րու բազմաթիւ նկարներով: Գին 5 ֆր.